

Հայ պատմաբանների կողմից XIX դարի վերջի-XX դարի սկզբի Թուրքիայի պատմության պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին և մեկ առ մեկ արժեքավորեց յույս տեսած մենագրությունները: Ձեկուցողը նշեց, որ Սովետական Հայաստանի թուրքադեմոկրատիկ կողմից առաջ քաշված տեսակետները և տրված գնահատականները գնալով ստանում են ավելի լայն ճանաչում և արդեն իսկ արտացոլվել են Մոսկվայում հրատարակված մի շարք աշխատություններում: Հայ թուրքագետները ակտիվորեն մասնակցում են նաև հզորարարական հանրապետությունների թուրքագիտական կենտրոնների հետ համատեղ հրապարակվող կոլեկտիվ մենագրությունների նախապատրաստմանը: Այս ամենը վկայում է այն մասին, որ թուրքագիտությունը Սովետական Հայաստանում ապրում է իր վերելքի շրջանը, — եզրակացրեց Ե. Ղ. Սարգսյանը: Լենինգրադցի թուրքագետ Ի. Ե. Պետրոսյանը ժանոթացրեց ՍՍՀՄ հեռուստատեսության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքում Յու. Ա. Պետրոսյանի դեկլամատիկամբ տարվող օսմանագիտական ուսումնասիրությունների հետ:

Ձգալի թիվ էին կազմում երիտթուրքերի կառավարման օրոք Օսմանյան կայսրության ներքին և արտաքին քաղաքականության հարցերին նվիրված զեկուցումները: Պ. գ. գ. Վ. Ա. Բայրուզդյանը (Երևան) հարուստ արխիվային նյութերի հիման վրա քննադատեց Երանի նկատմամբ օսմանյան Թուրքիայի վարած նվաճողական քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Ուշագրավ էր նաև ՀՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ Ն. Ս. Խենկոյանի 1911—12 թթ. Թուրքիայում ծավալված միջկուսակցական պայքարի առանձին

դրվագներին նվիրված զեկուցումը, որտեղ օղտագործված էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի փաստաթղթերը: Պ. գ. Բ. Ա. Ա. Կոլեցեիկովը (Ալմա-Աթա) զեկուցման մեջ խոսվում էր առաջին բալկանյան պատերազմի նախօրյակին օսմանյան բանակի քաղաքականության պատրաստականության և երիտթուրքերի ռազմական քաղաքականության մեջ տեղ գտած սխալների մասին: Կարդացվեց նաև ռեզգային հարցը Օսմանյան կայսրության թուրքական ընդդիմադիր կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում (1908—1913 թթ.): խորացրեց զեկուցումը, որի հեղինակն էր պ. գ. Բ. Ռ. Ա. Սաֆրաուտյանը (Երևան):

Կոնֆերանսի մասնակիցները հանդես եկան նաև զեկուցումներով, որտեղ արծարծվում էին Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հետ կապված խնդիրներ: Ընդ որում, կարդացված զեկուցումներում խոսքը գնում էր ոչ միայն հայերի, այլ նաև արաբների և քրդերի հակաօսմանյան ազատագրական պայքարի առանձին դրվագներին մասին: Հիշատակման է արժանի Բ. գ. Բ. Մ. Հ. Փաշալի (Երևան) զեկուցումը: Հետաքրքիր էին նաև պ. գ. Բ. Ջ. Ջալիլի և պ. գ. Բ. Ն. Հ. Նաջարյանի (Երևան) էլ՝ Երևան) ելույթները:

Կարդացվեցին նաև մի շարք այլ զեկուցումներ:

Վերջում տեղի դնեցավ կոնֆերանսի արդյունքների ամփոփում: Նյութ ունեցողները գահունակությամբ նշեցին, որ գիտաժողովը անցավ բարձր մակարդակով և մեկ անգամ ևս ապացուցեց նման նստաշրջանների նշանակությունը գիտության հետագա առաջընթացի համար:

Ռ. Ա. ՍԱՖՐԱՍՅԱՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայ միջնադարյան գրականությանը նվիրված գիտաժողովը, որ կազմակերպել էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը, տեղի ունեցավ Երևանում 1986 թ. սեպտեմբերի 15—19-ը: Բավական լայն էր գիտաժողովի մասնակիցների կազմը. Երևան էին ժամանել հայագետներ Մոսկվայից, Լենինգրադից, Թբիլիսիից, Բաքուից, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից, Լեհաստանից, Հունգարիայից, Մոնղոլիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իտալիայից, Գերմանիայի Զեդերատիվ Հանրապետությունից, Ճապոնիայից, Բել-

գիայից, Լյուքսեմբուրգից, ինչպես նաև Սփյուռքի տարբեր զաղթօջախներից: Գիտաժողովն մասնակցում էին Սովետական Հայաստանի բազմաթիվ գիտնականներ, որոնք աշխատում են գիտությունների ակադեմիայի համակարգում, Մաշտոցի անվան Մատենադարանում, Երևանի պետական համալսարանում և այլ բարձրագույն դպրոցներում: Գիտաժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ս. Ավետիսյանը, ապա ընթերցվեց Հայկ. ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ողջույնի խոսքը:

Գիտաժողովը իր աշխատանքները անցկացրեց ինչպես լիազումար, այնպես էլ մասնաճյուղային (գեղարվեստական գրականություն, գիտական գրականություն, գրական-մշակութային առընչություններ և թարգմանական գրականություն) նիստերով: Զեկուցումներում քննարկվող շարքերը լայն ընդգրկում ունենին՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Սայաթ-Նովան: Լիազումար նիստերում զեկուցումներ լսվեցին միջնադարյան գրականությունների զարգացման օրինաչափությունների (ակադեմիկոս Դ. Լիխաշով, Լենինգրադ), միջնադարյան գրականությունների համակարգում հայ գրականության տեղի ու դերի (Ս. Ավերիցև, Մոսկվա), թերականական գրականության՝ որպես հայ մշակութային բնագավառի (Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյան), հայ միջնադարյան գիտության համակարգում փոխադարձական գրականության ունեցած տեղի (Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Արևշատյան), Մովսես Խորենացու աշակերտության համակարգի (Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Սարգսյան), Մովսես Խորենացու գրական հանճարի (Ռ. Հյուսն, ԱՄՆ, Գլաս-բորո), Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանի կառուցվածքի (Ժ.—Պ. Մահե, Փարիզ), մարդու ճակատագրի նարեկացիական ըմբռնման (Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Նալբանդյան) մասին:

Լիազումար նիստերից մեկը տեղի ունեցավ Լենինական քաղաքում, որտեղ զեկուցումներ կարդացվեցին Ծալի Նշեցու դրական ավանդների (Ա. Սանճյան, Լոս Անջելես), Սայաթ-Նովայի ստեղծագործության տիպաբանական նկարագրի (Հ. Բախլինյան, Երևան), հայ միջնադարյան գրականության նկատմամբ վրաց հասարակայնության հետաքրքրության, հայերենից վրացերեն կատարված թարգմանությունների (Լ. Մենաբե, Բրիտիս), պատմության խորենացիական ըմբռնման (Լ. Զեքիյան, Վենետիկ), նարեկացու ստեղծագործության մեջ պատկերի (Ա. Ղազինյան, Երևան) վերաբերյալ:

Գեղարվեստական գրականության մասնաճյուղում զեկուցումներն ու հաղորդումները հիմնականում նվիրված էին հայ միջնադարյան գրականության գեղարվեստական առանձնահատկությունների բացահայտմանը, արձակի ու շափածոյի առավել կարևոր արժեք ներկայացնող ստեղծագործությունների բովանդակության և հորինման արվեստի լուսաբանությանը, գրականության բնույթին՝ զարգացման տարբեր փուլերում: Դրանցից էին Վ. Ներսիսյանի (Երևան, «Հայ միջնադարյան բանաստեղծության բնույթը զարգացման տարբեր փուլերում»), Լ. Հակոբյանի (Երևան, «Հայկական հիմներգության արվեստն իր պատմական զարգացման մեջ»), Մ. Գասպարովի (Մոսկվա, «Պատումի և բարոյախոսության

առանձնահատկությունները Վարդանի առկենթություն»), Ա. Սարգսյանի (Երևան, «Հովհաննես Դրասխանակերտցու ստեղծագործության մի առանձնահատկության մասին»), Ա. Տերյանի (ԱՄՆ, Միչիգանի համալսարան, «Կորյունի «Վարդ Մաշտոցին» որպես ներբողյան») և այլ զեկուցումներ:

Ուշադրություն էր դարձված գրական կերպարների վերլուծության և գնահատման հարցերին, ինչպես, օրինակ, Գ. Աբգարյանի (Երևան, «Եվայի կերպարի մի ինքնատիպ մեկնաբանում հայ պարականոն գրականության մեջ»), Կ. Յուզբաշյանի (Լենինգրադ, «Հեղինակի կերպարը միջնադարյան հայ գրականության մեջ»), Շաքե Տեր-Միքոնյան-Մինասյանի (Կանադա, «Կանանց կերպարները հայկական ժողովրդական «Սասնի ճիւղի» դրամայում») զեկուցումներում:

Հայ միջնադարում ձևավորված գրական-գեղագիտական ըմբռնումների հարցերն էին շոշափվում Ա. Սրապյանի (Երևան), Հ. Թամրազյանի և Ժ. Քալանթարյանի (Երևան) զեկուցումներում, որոնք նվիրված էին Հովհաննես Երզնկացու, Նարեկյան դպրոցի և X—XIV դարերի մեկնությունների արվեստագիտական, գրականագիտական ու բանաստեղծական հայացքների լուսաբանմանը:

Միջնադարյան հայ գրականության հուշարձանների բովանդակության և գրական-գեղարվեստական առանձնահատկությունների մասին զեկուցվեցին Դ. Գասպարյանը (Երևան, «Եվայի և գույնի գեղագիտությունը հայ միջնադարյան պոեզիայում»), Պիտեր Քառն (ԱՄՆ, Կոլումբիայի համալսարան, «Աղթամարցու զգացմունքների առարկան»), Ե. Քասումին (Լիբանան, «Մաշտոցյան դպրոցը և մեկնության գաղափարը V դարի մատենագիրների երկերում»), Ն. Գևորգյանը (Երևան, «Սայաթ-Նովայի երկերի ավանդական սիմվոլիկայի մեկնաբանման մասին»):

Վկայաբանությունների ուսումնասիրման մի քանի կարևոր հարցերի մասին զեկուցում կարդաց Պ. Հակոբյանը (Երևան): Գրականության զարգացման ընթացքի վրա միջնադարյան գրական մի շարք հուշարձանների ունեցած ազդեցության բացահայտման էին վերաբերում Շ. Նազարյանի, Ա. Եղիազարյանի, Հ. Մարգարյանի զեկուցումները: Մասնաճյուղի զեկուցումներում առաջ քաշվեցին բանասիրական բնույթի այնպիսի խնդիրներ, որոնք սերտորեն առնչվում են գրականության տեսության ու պատմության հետ: Հանդես եկան Ջեյմս Ռասսելը (ԱՄՆ, Կոլումբիայի համալսարան), Ա. Խոսրոբ (Լենինգրադ), Ա. Փերիսանյանը (Լենինգրադ), Ս. Հարությունյանը (Երևան), Ա. Մուշեղյանը (Երևան):

Նույնքան բազմազան էին գիտական գրականության մասնաճյուղում կարդացված զեկուցում-

ները Դրանք նվիրված էին հիմնականում աղ-
բյուրագիտական խնդիրներին (Ս. Երեմյան, Երե-
մյան, «Աշխարհացույցը» աղբյուրագիտական տե-
սակետից»։ Ռ. Բոսման, ԱՄՆ, Վաշինգտոն,
«Վարդան Արևելցու Պատմությունը և նրա աղ-
բյուրները»։ Ա. Տեր-Ղեկոսյան, Երևան, «Մու-
շեղի վիպական գրույթները արար պատմագրու-
թյան մեջ»։ Ֆ. Կյուկերտ, ԳԴՀ, Հալլե, «Պատա-
րագի հետգույն շերտերը» և ուրիշներ), բանա-
սիրական ու պատմագիտական ճշգրտումներին
(Ն. Գարսոյան, ԱՄՆ, Նյու Յորք, «Բուդանդա-
րան պատմությունը» գրքի առաջին գրքի խնդիրը»։
Բ. Ուլուրարյան, Երևան, «Աղվանից աշխարհի
պատմության» պատմական հիմքը և գեղարվես-
տական արժանիքները»։ Ա. Մաթևոսյան, Երե-
մյան, «Մովսես Խորենացիի և Աթանաս Տարոնա-
ցու «Ժամանակագրությունը»։ Գ. Վինկլեր, ԱՄՆ,
Քոլեջիլ, «Վիճելի հարցեր Կորյունի և Մովսես
Խորենացու երկերում»։ Ե. Ռենու, Փարիզ, «Ճա-
շոց և Տոնական. աղբյուրներ, լրացումներ»), միջ-
նադարյան մատենագրական հուշարձանների
պատմական ու բանասիրական գնահատմանը
(Հ. Միրզոյան, Երևան, «Ստեփանոս Դաշտեցու
աշխատությունների պատմաբանասիրական ար-
ժեքը»։ Ա. Ալեքսանյան, Երևան, «Միջնադարյան
նամակը և Գրիգոր Մագիստրոսի նամակագրա-
կան ժառանգությունը»։ Ս. Վարդանյան, Երևան,
«Ամիրդովյաթ Ամասիացու «Անգիտաց անպետը»
և նրա գիտապատմական արժեքը» և այլն)։ Զե-
կուցումներ կարդացվեցին նաև միջնադարյան
հայ փիլիսոփայության, երաժշտական արվեստի,
լեզվական խնդիրների վերաբերյալ
Գրական-մշակութային առնչություններին ու
թարգմանական գրականության հարցերին էին

վերաբերում երրորդ մասնաճյուղում կարդացված
գեկուցումները։ Մի շարք հաղորդումներ նվիր-
ված էին թարգմանական առանձին հուշարձան-
ների (Գ. Լաֆոնտեն, Բելգիա, «Գրիգոր Նազիան-
զացու ճառերի հայերեն խմբագրությունը»։
Գ. Ուլուհոճյան, Իտալիա, Բարսելոնա Կեսարացու
կանոնների հայերեն խմբագրությունը»։ Ք. Տեր-
Ղալթյան, Երևան, «Մեծ հայելու» հայերեն
տարբերակը և XV—XVIII դդ. գեղարվեստա-
կան թարգմանական արձակը»։ Կ. Մուրադյան,
Երևան, «Գրիգոր Նյուսացու «Թ Մեխիտոս եպիս-
կոպոս» ճառի հին հայերեն թարգմանությունը» և
այլն), գրական առնչություններին (Է. Շյուտց,
Հունգարիա, «Գրական-պատմական աղբյուրները
հայ և հունգարական միջնադարյան գրականու-
թյունների միջև»։ Է. Խինթիսի, Թրիլիսի, «Բյու-
զանդական գրականությունը միջնադարյան վրա-
ցական թարգմանություններում և հայ-վրացական
գրական առնչություններ»։ Ռ. Հովհաննիսյան,
ԱՄՆ, Լոս Անջելես, «Հայկական դասական աղ-
բյուրների թարգմանությունները ԱՄՆ-ում»։ Գ.
Կարազյուզյան, Երևան, «Հայ-եվրոպական գրա-
կան կապերի պատմությունից» և ուրիշներ), մա-
տենագրական երկերի, էպոսների տիպաբանական
ուսումնասիրությանը, հայկական աղբյուրների
այլ լեզուներով թարգմանություններին, հայ-
եվրոպական գրական կապերի պատմության և
այլ հարցերի։

Եզրափակիչ լիագումար նիստում գիտաժողո-
վի արդյունքները ամփոփեց գիտաժողովի կազմ-
կոմիտեի նախագահի տեղակալ, Հայկ. ՍՍՀ ԳԱ
խսկական անդամ Է. Զրբաշյանը։

Պ. ԷՄԻՅԱՆ